ՎԻՈԼԵՏՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ & ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ



ՎԻՈԼԵՏՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Բուհական դասագիրք

Երևան
Մայ Պրինտ
2024

ՀՏԴ 32(075.8)
ԳՄԴ 66.0g73
Մ 283

Հաստատված է Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոնի գիտական խորհրդի կողմից

Մասնագիտական խմբագիր՝ քաղ. գ.դ. Տ. Ս. Թորոսյան
Խմբագիր՝ Լ. Վ. Պողոսյան

Գրախոսներ՝ Քաղ.գ.դ. **Ա. Ալեքսանյան**
Քաղ.գ.դ. **Վ. Դավթյան**
Քաղ.գ.թ. **Մ. Կիրակոսյան**

Մանուկյան Վ.
Մ 283 Քաղաքական վերլուծություն և կանխատեսում: Բուհական դասագիրք / Վ. Մանուկյան; Եր.: Մայ Պրինտ, 2024.- 345 էջ:

Բուհական դասագիրքը նախատեսված է քաղաքագիտական մասնագիտությունների ծրագրերով սովորող ուսանողների և ասպիրանտների համար: Բուհական դասագրքում ներկայացված են քաղաքական վերլուծության հիմնական մեթոդները և առանձնահատկությունները, քաղաքական վերլուծության մեթոդաբանական մոտեցումները և կազմակերպման փուլերը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձված քաղաքական կանխատեսման սկզբունքներին, մեթոդներին և հիմնական փուլերին, ինչպես նաև կանխատեսման հավաստիության և ճշգրտության խնդիրներին՝ որպես քաղաքական որոշումների կայացման գործընթացների արժանահավատ հիմք:

ՀՏԴ 32(075.8)
ԳՄԴ 66.0g73

ISBN 978-9939-0-5149-9

© Մանուկյան Վ., 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....7

ԹԵՄԱ 1. «Քաղաքական վերլուծություն» եզրույթը և տեսակները.....11
«Քաղաքական վերլուծություն» եզրույթի ընկալման հիմնական մոտեցումները.....11
Տեսական և կիրառական քաղաքագիտական հետազոտություններ.....14
Տեսական և կիրառական քաղաքագիտական հետազոտություններում կիրառվող վերլուծական ընթակարգը.....18

ԹԵՄԱ 2. Քաղաքական գործընթաց.....23
«Քաղաքական գործընթաց» հասկացությունը.....23
Քաղաքական գործընթացի տեսակները.....27
Քաղաքական գործընթացի կառուցվածքը, հիմնական մասնակիցները և պարամետրերը.....30

ԹԵՄԱ 3. Քաղաքական վերլուծության սուբյեկտները.....36
Փորձագիտական գիտելիքի զարգացման պատճառները և հետագիծը.....36
Փորձագետների և քաղաքական գործիչների տարանջատումը.....40
Քաղաքական վերլուծության սուբյեկտների դասակարգումը.....42

ԹԵՄԱ 4. Քաղաքական վերլուծության շրջանակը և էթիկան.....52
Նկարագրական և հեռանկարային քաղաքական վերլուծություններ.....56
Քաղաքական վերլուծության էթիկա.....57

ԹԵՄԱ 5. Քաղաքական վերլուծության մեթոդաբանական կազմակերպումը.....65
Քաղաքական վերլուծության մեթոդաբանության ձևավորումը և զարգացումը.....65
Քաղաքական վերլուծության հիմնական փուլերը.....67
Քաղաքական իրավիճակի վերլուծություն.....67

ԹԵՄԱ 6. Քաղաքական վերլուծությունների մեթոդաբանական մոտեցումները 76
Ինստիտուցիոնալ մոտեցում 77
Բիհեյվիորալիստական (վարքագծային) մոտեցում 82
Կառուցվածքային-գործառնական մոտեցում 88
Ռացիոնալ ընտրության տեսություն 91
Դիսկուրս մոտեցում 96

ԹԵՄԱ 7. Քաղաքական վերլուծության մեթոդները: Քաղաքական վերլուծության քանակական մեթոդներ 105
Քաղաքական վերլուծության քանակական մեթոդ 105
Քաղաքական վերլուծության վիճակագրական մեթոդներ 105
Միափոփոխական և երկփոփոխական վերլուծություն (Univariate and bivariate analysis) 106
Վարիացիաների վերլուծություն (Analysis of variance (ANOVA)) 121
Բազմակի ռեգրեսիայի վերլուծություն (Multiple regression analysis) 128
Ժամանակային շարքերի վերլուծություն (Time series analysis) 133
Իրադարձությունների պատմության վերլուծություն (Event history analysis) 147
Գործոնային վերլուծություն (Factor analysis) 160
Հետագծային վերլուծություն (Path analysis) 171

ԹԵՄԱ 8. Քաղաքական վերլուծության մեթոդները: Քաղաքական վերլուծության որակական մեթոդներ 179
Քաղաքական վերլուծության որակական մեթոդներ 179
Որակական վերլուծության բնույթը 180
Որակական վերլուծության մեթոդաբանական մոտեցումները 182
Ազգագրական մեթոդ (Ethnography) 183
Գործողության հետազոտություն (Action research) 183
Առանձին դեպքի ուսումնասիրություն (Case study) 184
Կոդավորում (Coding) 185
Հիմնավորված տեսություն (Grounded theory) 192
Տեսական զգայնություն (Theoretical sesitivity) 207
Հետազոտության որակական մեթոդներ 213
Բովանդակային վերլուծության մեթոդ (Content analysis) 213
Իրադարձությունների վերլուծության մեթոդ (Event analysis) 218

Կոգնիտիվ քարտեզագրման մեթոդ (Cognitive mapping) 220

ԹԵՄԱ 9. Քաղաքական մոդելավորում 224
Մոդելի հասկացությունը 224
Մոդելների տեսակները 225
Մոդելավորման փուլերը 229
Սիմուլյացիա 229
Մատրիցի մեթոդ և խաղերի տեսություն 231

ԹԵՄԱ 10. Հարցումներ 242
Հարցումների տարրերը, փուլերը և տեսակները 242
Հարցումների օգտագործումը (և/կամ սխալ օգտագործումը) քաղաքական վերլուծության ժամանակ 249

ԹԵՄԱ 11. Փորձագիտական գնահատում 260
Փորձագիտական գնահատման սահմանումը, տեսակները, կիրառման ոլորտները 260
Փորձագիտական գնահատման մեթոդներ 261
Խմբային փորձագիտական գնահատման առկա մեթոդներ 262
Փորձագիտական հանձնաժողովների մեթոդ 263
Ուղեղային գրոհ (brainstorming) 264
Սինեկտիկ մեթոդ 268
Խմբային փորձագիտական գնահատման հեռահար մեթոդներ 272
Դելֆիի մեթոդ 273
PATTERN մեթոդ 278
Նպատակների ծառի կառուցման մեթոդ 279
Փորձագիտական գնահատման ունիվերսալ մեթոդներ 284
Սցենարի կանպատեսման կառուցման մեթոդ 285
Ձևաբանական (մորֆոլոգիական) վերլուծության մեթոդ 288
Սինոպտիկ մեթոդ 289

ԹԵՄԱ 12. Քաղաքական վերլուծության մեթոդների ռացիոնալ օգտագործ-ման խնդիրները և դրանց ներդրման սահմանափակումները 292
Քաղաքական վերլուծության մեջ ֆորմալ մեթոդների կիրառման սահմա-նափակումները 293

Մարդկային ռացիոնալ վարքի մոդելը մոդիֆիկացնելու փորձերը 296
Փորձագիտական համակարգերը և քաղաքական վերլուծությունը 298

ԹԵՄԱ 13. Քաղաքական կանխատեսում 301
Քաղաքական կանխատեսման անհրաժեշտությունը և էությունը 301
Քաղաքական կանխատեսման զարգացման միտումները 302
Քաղաքական կանխատեսման տեսակները 304
Ներքաղաքական և արտաքին քաղաքականության կանխատեսումներ 304
Որոնողական և նորմատիվ քաղաքական կանխատեսումներ 306
Գործառնական, կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ և հեռահար կանխատեսումներ 309
Ակտիվ և պասիվ կանխատեսումներ.....309
Ինքնաիրականացվող և ինքնահերքվող կանխատեսումներ 310
Քաղաքական կանխատեսման օբյեկտիվ հիմքերը և պայմանները. Հաշվարկում և թերի հաշվարկում 310

ԹԵՄԱ 14. Քաղաքական կանխատեսման սկզբունքները և փուլերը 318
Քաղաքական կանխատեսման սկզբունքները..... 318
Քաղաքական կանխատեսման հիմնական փուլերը..... 320

ԹԵՄԱ 15. Քաղաքական որոշումների ընդունում..... 327
Քաղաքական որոշումների կայացման սկզբունքները և սխեմաները 327
Քաղաքական որոշումների ընդունումը ռեսուրսների սղության պայման-ներում 332
Քաղաքական որոշումների դասակարգում 334
Քաղաքական գործչի անհատական որակները և առաջնորդության ոճը քաղաքական որոշումների ընդունման գործընթացում 336
Քաղաքական որոշումների թափանցիկության բարձրացման ռազմավարու-թյունը..... 339
Քաղաքական որոշումների ընդունման ռացիոնալության խնդիրը 341

ՆԱԽԱԲԱՆ

Քաղաքականության վերլուծության մեթոդները վերջին տասնամյակների ընթացքում սոցիալական գիտությունների ամենասրընթաց զարգացող ոլորտներից մեկն են։ Ժամանակակից քաղաքագիտության մեջ կարելի է առանձնացնել երկու հիմնական մակարդակ՝ տեսական և կիրառական։ Առաջինի շրջանակներում ուսումնասիրվում են քաղաքական գործընթացների ընդհանուր օրինաչափությունները և փորձ է արվում պարզել դրանց փոփոխության ուղիներն ու ուղղությունները, մինչդեռ երկրորդի ներկայացուցիչները մշակում են ներկայիս քաղաքական պրակտիկայի հրատապ խնդիրների լուծման մեթոդներ և ուղիներ։ Գիտակցելով հիմնարար քաղաքագիտական հետազոտությունների կարևորությունը՝ հարկ է նշել, որ կիրառական հետազոտությունները նույնպես կարևոր նշանակություն ունեն, քանի որ դրանց կապը առօրյա քաղաքական կյանքի հետ ավելի տեսանելի և շոշափելի է։

Քաղաքականության վերլուծությունն, ըստ էության, դյուրացնում է միաժամանակ երկու գործընթաց՝ քաղաքականության մշակման գործընթացը դարձնում է ավելի հասկանալի, ինչպես նաև քաղաքական որոշումներ ընդունողներին ապահովում է հրատապ քաղաքական, տնտեսական, սոցիալական և անվտանգային խնդիրների վերաբերյալ (կանխարգելման, լուծման, քաղաքականության և ռազմավարության մշակման և նմանատիպ այլ) գիտելիքներով։ Քաղաքական որոշումները համակցում են բարդ տեխնիկական գիտելիքները բարդ սոցիալական և քաղաքական իրողությունների հետ, սակայն հանրային քաղաքականության սահմանումը շարունակում է բախվել տարատեսակ խնդիրների. մի շարք գիտնականներ այն սահմանում են որպես այն ամենն, ինչ կառավարությունները որոշում են անել կամ չանել, մինչդեռ մյուսները սահմանումներ, որոնք կենտրոնանում են հանրային քաղաքականության առանձին բաղադրիչների վրա։

Այս համատեքստում առանձնահատուկ հիշատակման կարիք ունեն Հարոլդ Լասսուելի աշխատությունները, ով համարվում է քաղաքական հետազոտությունների հիմնադիրը։ Լասսուելը գծագրում էր միջգիտակարգային ուղղություն, որը կուղղորդեր հետպատերազմյան (Երկրորդ համաշխարհային) շրջանում ինդուստրիալ հասարակություններում քաղաքական որոշումների ընդունման գործընթացը։ Նա կոչ էր անում ուսումնասիրել

«քաղաքականության մեջ գիտելիքի» և «քաղաքականության մասին գիտելիքի» դերը: Նախագիծը ներառում էր համապարփակ սոցիալական-գիտական դիսցիպլին՝ նպատակաուղղված նոր ձևավորվող ժողովրդավարական վարչակարգի ներդաշնակեցմանը տեխնոարդյունաբերական հասարակության իրողություններին: Նախագծված լինելով որպես միջգիտակարգային՝ այն պետք է ներառեր քաղաքագիտության, սոցիոլոգիայի, մարդաբանության, հոգեբանության, վիճակագրության և մաթեմատիկայի, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ ֆիզիկայի և բնական գիտությունների տարրեր: Միաժամանակ, այն պետք է կիրառեր ինչպես քանակական, այնպես էլ որակական հետազոտության մեթոդներ:

Սակայն քաղաքական վերլուծության գիտակարգը չհաջողեց ամբողջությամբ հետևել Լասսուելի համարձակ տեսլականին՝ փոխարենը ընթանալով զարգացման ավելի նեղ հետագծով: Արդյունքում քաղաքական վերլուծությունը որդեգրել է էմպիրիկ ուղղվածություն, որն առավելապես ուղղված է քաղաքական գործընթացների ուսումնասիրությանն, ինչպես նաև կառավարման և որոշումների կայացման գործընթացների, քան ժողովրդավարական կառավարման դյուրացմանը: Ի տարբերություն միջգիտակարգային մեթոդաբանական տեսլականի, գիտակարգը ձևավորվեց այն ժամանակ գերիշխող նեոպոզիտիվիստական/էմպիրիկ տեսություններից բխող սահմանափակ մեթոդաբանական շրջանակով: Սա հանգեցրեց նրան, որ շեշտը դրվեց ճշգրիտ քանակական վերլուծության, փաստերի և արժեքների օբյեկտիվ տարանջատման և անկախ ձևավորման սոցիալական համատեքստից իրենց վավերականությունը չխեղաթյուրող ընդհանրացված բացահայտումների որոնման վրա: Այսպիսով, քաղաքական վերլուծությունը սահմանափակ մեթոդաբանական շրջանակի միջոցով փորձում է մշակել ընդհանրական կանոններ՝ կիրառելի մի շարք խնդիրների և համատեքստերի համար: Դա պայմանավորված է գիտակարգի զարգացման վրա տնտեսագիտության և վերջինիս պոզիտիվիստական գիտական մեթոդաբանության էական ազդեցությամբ:

Կարելի է փաստել, որ քաղաքական վերլուծության այս ժամանակակից դիսցիպլինը զգալի հաջողություններ է գրանցել՝ լայնորեն կիրառվելով ոչ միայն ակադեմիական շրջանակներում, այլև պետական կառավարման բոլոր մակարդակներում և հանրային հատվածում:

Սակայն, գիտակարգը բախվում է մի շարք մարտահրավերների։ Այն հաճախ է քննադատության ենթարկվում քաղաքական գործընթացներին անմիջականորեն վերաբերող խնդիրների լուծմանն ուղղված կամ, այսպես կոչված, «կիրառելի գիտելիքի» ներկայացման ձախողման պատճառով։ Սա բնավ չի նշանակում, որ քաղաքական վերլուծությունը մշտապես ձախողում է նման գիտելիքի տրամադրումը կամ չի ունենում էական ազդեցություն, սակայն այն միշտ չէ, որ կարողանում է կատարել այն, ինչ նախատեսել է, այն է՝ ապահովել նման գիտելիքի ընկալումն ու ամենակարևորը՝ օգտագործումը, որն ուղղակիորեն կիրառելի է խնդիրների լուծման համար։ Հաճախ ազդեցությունը սահմանափակվում է միայն լուսավորչական գործառույթով, այն է՝ օժանդակելով քաղաքական գործիչներին, քաղաքական որոշումներ կայացնողներին և հանրությանը մտածել հանրային խնդիրների մասին, սակայն ոչ լուծել դրանք։ Այս խնդրին նվիրված հետազոտություններն արձանագրում են, որ վերլուծական հետազոտություն ստացած պաշտոնատար անձանց միայն մեկ երրորդն է պատկերացնում՝ ինչպես օգտագործել ստացված վերլուծությունը։ Սա հանգեցրեց շրջադարձի դեպի քաղաքականության փաստարկման և խորհրդակցական քաղաքական վերլուծության շեշտադրմանը։ Այս դիրքորոշումը մարտահրավեր է նետում գիտակարգի ձևավորման հիմքում ընկած նեոպոզիտիվիստական կամ էմպիրիկ ուղղվածությանը՝ առաջադրելով այն գաղափարը, որ այն չի կարող ներկայացնել միայն քաղաքականության մշակման համար անհրաժեշտ գիտելիք։ Անհրաժեշտ է նորմատիվ մոտեցման որդեգրում, որը, իր հերթին, կօգնի միավորել նորմատիվ և էմպիրիկ հետազոտությունները։

Այդպիսով, արդիական է դառնում քաղաքական որոշումների կայացման գործընթացների բարեփոխման և կատարելագործման ուղիների փնտրտուքը։ Ինչպես արդեն նշվեց, վերոհիշյալ խնդրի լուծման հիմնական ուղիներից մեկը գործնականում քաղաքական վերլուծության՝ գիտական այլ մեթոդների հետ միաժամանակյա օգտագործման ավելի լայն կիրառումն է, ինչը թույլ կտա ուսումնասիրել կոնկրետ քաղաքական իրադարձություններ և իրավիճակներ, կանխատեսումներ ձևավորել դրանց հետագա զարգացման վերաբերյալ և ընդունել հիմնավոր քաղաքական որոշումներ։ Եվ, իրապես, քաղաքական վերլուծության մասնագիտական կիրառումը կարող է որակապես հեղաշրջել քաղաքական որոշումների կայացման գործըն-

թացը, ինչն էլ կիրառական քաղաքագիտության հիմնական նպատակներից է։

Ձեռնարկն ուղղված է այս և մի շարք այլ հարցերի պարզաբանմանը։ Նպատակն է ուսանողների շրջանում զարգացնել վերլուծական աշխատանքներում քաղաքական վերլուծության ու կանխատեսման մեթոդների կիրառման հմտությունները և ներկայացնել քաղաքական վերլուծության և կանխատեսման՝ կառավարման և քաղաքական որոշումների կայացման գործընթացներում կիրառման հնարավորությունները։